ՆՈՐ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԲԱԶՄԱՎԷՊ ՀԱՆԴԻՍԱՐԱՆԻ

ԱԶԳԱՅԻՆ - ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ - ԳԻՏԱԿԱՆ - ՊԱՏՄԱԿԱՆ -
ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ — ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ՝ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԱՄՍԱԹԵՐԹ

ԺԺԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԲԱԶՄԱՎԷՊ ՀԱՆԴԻՍԱՐԱՆԸ Հայ ազգի մամուլին երիցագոյն ներկայացուցիչն՝ 1919ին կը սկսի նոր շրջան մը։

ԲԱԶՄԱՎԷՊի արդի խմբագրութիւնը՝ յարգելով իւր նախորդաց գործունէութեան ծրագիրը՝ պիտի ճգնի Գիտական, Գեղարուեստական, Բարոյական և Դպրոցական մասնաճիւղերու աւելի ոյժ տալ. հետևաբար պիտի ջանայ, Վարդապետականը՝ Գործնականին, Բանասիրականը՝ Գիտականին, Գեղարուեստականը՝ Մանկավարժականին և Օգտակարը՝ Զուարճալիին հետ հաշտեցնել։

ԲԱԶՄԱՎԷՊը Հայ Ազգիս բարոյական, իմացական, կենցաղական զարգացմանը նպաստելու դիտաւորութեամբ, պիտի բովանդակէ Համազգային Ոլորտից և Գիտութեանց և Գեղեցիկ Դպրութեանց այժմէութիւններ՝ ինքնագիր կամ թարգմանածոյ։

ԲԱԶՄԱՎԷՊը որպէս զի ամբողջ Հայ մտքին՝ 1900էն մինչև ցարդ ի լոյս ընծայած կարևոր արտադրութիւններուն և հրատարակութիւններուն տեղեակ ընէ իր ընթերցողները, դարձեալ պիտի աշխատի ԳՐԱԽՕՍԱԿԱՆ բաժնին մէջ՝ խմբագրութեանս նուիրուած ամէն գրքերու և ՀԱՅԵՐԷՆ կամ ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐՈՎ ՀԱՅ հեղինակութիւններու կամ Գեղարուեստական արտադրութիւններու վրայ, հակիրճ տեսութիւններ հրատարակել։

ԲԱԶՄԱՎԷՊը 1919ի շրջանին մէջ՝ պիտի ջանայ իր անուան հաւատարիմ մնալով՝ Բազում վիպեր՝ այսինքն գիտութիւններ մատուցանել՝ գրասէր և ընթերցասէր Հայորդւոց և անգամ մը ևս գնահատուիլ իբրև ՀԱՄԱՅՆԱԳԻՏԱՐԱՆ հայկական մտքի։

ԲԱԶՄԱՎԷՊը ամէն ամսուան սկիզբը լոյս պիտի տեսնէ և անմիջապէս պիտի ուղարկուի բաժանորդներու և մեզի հետ պարբերական հրատարակութիւններ փոխանակողներու։ ԲԱԶՄԱՎԷՊի պրակներու առաքման և ընդունելութեան յապաղումները կամ թղթատարութեանց կամ պետական նոր օրէնքներու տրամադրութեանց պէտք է վերագրուին։ Խմբագրութիւնս պիտի շարունակէ բացառիկ գրքոյկներ կամ գրախօսական գրացուցակներ նուէր յղել։

ԲԱԶՄԱՎԷՊի խմբագրութիւնս և Ցպարանիս վարչութիւնը ընդհանուր սղութեան անտեղիտալի պահանջին հանդէպ, և բազմաթիւ արգելքներու և ծախսերու հրամայական հարկին տակ՝ անգամ չուզեց գինն բարձրացնել այլ յանձն առնելով ամէն զոհողութիւն, կը շարունակէ ամենաչափաւոր պայմաններով Բաժանորդներ արձանագրել յաջորդ տարւոյն համար։

ԲԱԶՄԱՎԷՊի Նոր խմբագրութիւնն կը ծանուցանէ ի վերջոյ իւր յարգելի բաժանորդներուն թէ 1918 Բազմավէպն, որոշուած է մի առանձին հատորով հրատարակել, գլխաւորապէս նուիրուած մեր Ազգի մարտիրոսագրութեան և Հայաստանի անկախութեան։

ՏԱՐԵԿԱՆ ԿԱՆԽԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Առանձնականներու համար ֆրանք 15,— Ցոլար 3,—

Դրավաճառներու և Ազգային դպրոցներու համար առանձին զիջումն։

digitized by S.E.A.R.C.H. A.R.A.R.A.T.